ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/294 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Արտաքին տեսքի վերաբերյալ պահանջներ Մեդալը բաղկացած է կախիչից և դրան կապօղակով ամրացած սկավառակից: Սկավառակի տրամագիծը 35 մմ է, այն պատրաստվում է 925 հարգի արծաթի համաձուլվածքից, պրուֆֆ տեխնոլոգիայով և արտադրվում է միայն դրոշմման ճանապարհով: Մեդալի նախապատրաստվածքի հաստությունը 2,5մմ է, կախիչի նախապատրաստվածքի հաստությունը 2,0մմ: Մեդալն անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում է բարձր հարգի ոսկով: Սկավառակի դիմերեսին պատկերված է կարկին և եռանկյուն քանոնների ռելիեֆային համակցություն, որի կենտրոնում վեր է խոյանում ԵՐևանի քաղաքապետարանի շենքի պատկերը: Հետնամասում Ալեքսանդր Թամանյանի հեղինակած Երևանի գլխավոր հատակագծի պատկերն է: Մեդալի արտաքին շրջագծի կորին զուգահեռ, ուռուցիկ մեծատառերով գրված է «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ» գրվածքը: Կախիչը պատրաստվում է 925 հարգի արծաթի համաձուլվածքից, պրուֆֆ տեխնոլոգիայով և արտադրվում է միայն դրոշմման ճանապարհով: Այն անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում է բարձր հարգի ոսկով: Կախիչի կենտրոնական մասում Երևան քաղաքի ռելիեֆային զինանշանն է, որի աջ և ձախ կողմերում դափնու տերևներ են: Յուրաքանչյուր մեդալ պետք է դրված լինի համապատասխան տուփի մեջ /100X70X30մմ/ և ունենա իսկության հավաստագիր: 2. Որակի և գունային երանգների վերաբերյալ պահանջներ Մեդալների արտաքին տեսքր պետք է համապատասխանի նմուշի արտաքին տեսքին, ունենա նույն ռելիեֆային պատկերներն ու գրվածքները: Չի թույլատրվում՝ - Պատկերների և գրվածքների աղավաղում: - Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: - Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի տարբերությունը

	պետք է լինի ոչ ավել քան 0.1մմ: 3. Պատրաստման տեսակի վերաբերյալ պահանջներ Մեդալների միանմանությունը և չափսերի բարձր ճշտությունն ապահովելու համար դրանք պատրաստվում են միայն դրոշմման ճանապարհով և թվային տեխնոլոգիաների կիրառմամբ: 4. Անվանադրոշմում, հարգադրոշմում Մեդալի դարձերեսին դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի ապրանքային նշանը և արծաթի համապատասխան հարգը: 5. Համաձայնեցման ենթակա փաստաթղթեր Մատակարարի կողմից նմուշների 3Դ մոդելավորված մեդալների նկարները և հետո իրական նմուշները պետք է նախապես համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/294 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	